ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/02/2017

ՈՐՈՇՈՒՄ N 01-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել ՀՀ Սյունիքի Մարզի Գորիս համայնքի ավագանու 2017 թվականի թիվ 1 հերթական նիստի օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման մասին

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորսի քաղաքի 2013-2016 թվականների զարգացման քառամյա ծրագրի 2016 թվականի իրականացման մասին

3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 11-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

4.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5-ի <<Համայնքային ենթակայության հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 31-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

5.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

6.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզիԳորիս համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 36-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

7.<<Շուռնուխի ջրամատակարարման համակարգի վերակառուցում>> ծրագրի համաներդրումը ապահովելու նպատակով համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին

8.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի <<Որոտանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ին դրամական աջակցություն տրամադրելու մասին

9. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի <<Ներքին Խնձորեսկի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ին դրամական աջակցություն տրամադրելու մասին

10.Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Արցախյան խճուղի թիվ 8 հասցեի վարչական շենքը <<Վեոլա Ջուր>> փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալությամբ հատկացնելու մասին

11.Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող <<Շնուհայրի խաչմերուկ>> անվանյալ տարածքում կառուցված քլորակայանի սանիտարական գոտին <<Վեոլիա Ջուր>> փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալությամբ հատկացնելու մասին

12.Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Գարեգին Նժդեհի փողոցի թիվ 22 հասցեի վարչական շենքից <<Նարեկ և Մարտին>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վարձակալությամբ տարածք հատկացնելու մասին

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ
2. ԱՐՋԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ
4. ԼԱՋԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ
7. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ
8. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ
9. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ

2017թ. մարտ « 2 »
ք.Գորիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/02/2017

ՈՐՈՇՈՒՄ N 02-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով և հիմք ընդունելով Գորիս համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով կողմ՝10, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գորիս համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն 1, 2, 3, 4, 5 հավելվածների:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ
2. ԱՐԶԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ
3. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
7. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

8. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

9. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

10. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ

2017թ. մարտ « 2 »
ք.Գորիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/02/2017

ՈՐՈՇՈՒՄ Ն 03-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ 2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ընդունել ի գիտություն 2016 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաքի 2013-2016 թվականների զարգացման քառամյա ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը համաձայն հավելվածի:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ
2. ԱՐԶԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ
3. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
6. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

7. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

8. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2017թ. մարտ « 2 »
ք.Գորիս

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու
2017 թվականի փետրվարի 28-ի N-03-Ա որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ 2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գորիս համայնքի ավագանու 08.02.2013 թիվ 3-Ն որոշմամբ հաստատվել է Գորիս համայնքի 2013-2016 թվականների զարգացման քառամյա ծրագիրը: Համայնքի զարգացման ծրագրի տեսլականն է ապահովել Գորիս համայնքի սոցիալ-տնտեսական աճը, համայնքը դարձնել միջազգային տուրիզմի և էկոտուրիզմի զարգացման կենտրոն: Համաձայն համայնքի քառամյա զարգացման ծրագրի տեսլականի և հիմնական նպատակների, ինչպես նաև ընթացիկ ծրագրերի՝ Գորիս քաղաքում 2016թ. ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները:

Տեղական ինքնակառավարման ոլորտում՝

1. կազմակերպվել և վերահսկվել է աշխատակազմի ընթացիկ գործունեությունը, պատշաճ ձևով լուծվել են վերջինիս առջև դրված գործառույթներից բխող խնդիրները, ընդունվել են որոշումներ, որի արդյունքում քաղաքում իրականացվել են մի շարք աշխատանքներ,
2. Համայնքի ղեկավարին կից ձևավորվել և գործում է թվով երեք ԽՄ՝
-համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման ԽՄ,
-քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի ԽՄ,
-երիտասարդության, մշակույթի և սպորտի հարցերի ԽՄ:

Հողօգտագործման, քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ու բարեկարգման բնագավառում՝

1. Կապիտալ վերանորոգվել է վարչական թիվ 2 մասնաշենքի տանիքը,
2. Պետական բյուջեով՝ 186.3մլն դրամով ասֆալտապատվել և բարեկարգվել է Մ2 ճանապարհի 4.5 կմ-ը՝ Քրիստափոր փողոցն ամբողջությամբ, Սյունիք փողոցի մի հատվածը,
3. Համայնքային բյուջեով իրականացվել են Գորիս քաղաքի ներհամայնքային ճանապարհների ասֆալտ-բետոնե ծածկի ամենամյա փոսային նորոգման աշխատանքներ,
4. Սյունիքի մարզպետարանի կողմից հատկացված միջոցներով բարեկարգվել, ասֆալտապատվել և սելավաջրերի հոսքերից բարեկարգված հատվածները պաշտպանելու նպատակով շինարարական աշխատանքներ են տարվել Վ. Մամիկոնյան փողոցի 3420 քմ հատվածում,
5. Իրականացվել են Վանքի տափ թաղամասի բակերի բարեկարգում և ասֆալտապատում՝ ընդհանուր 3438 քմ մակերեսով,
6. Ասֆալտապատվել է Ավանգարդ թաղամասի 1800քմ մակերեսով ճանապարհը և վերանորոգվել 185քմ ընդհանուր մակերեսով մայթը,
7. Համայնքային բյուջեով՝ 12877108 դրամով, ասֆալտապատվել են Անկախության թիվ 1, Մաշտոցի թիվ 2, Նարեկացի թիվ 2, Նարեկացի թիվ 6 բնակելի շենքերի բակերը,
8. Կատարվել են ճանապարհների, հետիոտնային անցումների ամենամյա գծանշումներ, տեղադրվել են կանգառների նշաններ,
9. Պատրաստվել և տեղադրվել է փողոցների անվանումներով 102 ցուցատախտակ,
10. Ձեռք է բերվել 1 ձյունամաքրիչ և 2 խոտհնձիչ տեխնիկա,
11. Վերանորոգվել է քաղաքի մուտքի հենապատը,
12. Բարեկարգվել են Ա. Բակունցի արձանի և Արցախյան ազատամարտում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձանի շրջակա տարածքները, կանաչապատվել և ծաղկապատվել են ծաղկանոցները,

13. Իրականացվել է ոռոգման ցանցի վերանորոգում՝ «Որոտան» ՋՕԸ-ի միջոցով,
14. Վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ են տարվել Հին Գորիս և Վ. Մամիկոնյան թաղամասերում գտնվող մատուռներում,
15. Կազմակերպվել է գերեզմանատների գործունեությունը և դրանց պահպանման աշխատանքները: Քաղաքի 4 գերեզմանատան մուտքերի մոտ տեղադրվել են փորագրված քարե սեղաններ՝ վերջին հրաժեշտի համար,
16. «Ֆինքա» ՈՒՎԿ աջակցությամբ վերանորոգվել է Վետերանների տունը,
17. Վերանորոգվել է Գորիս գյուղ տանող երկաթե կամուրջը և բարեկարգվել շրջակայքը,
18. «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում 1,5 միլիոն ՀՀ դրամով վերանորոգվել է Վանքի տափ թաղամասի կամուրջը, լայնացվել և բետոնապատվել հարակից տարածքը,
19. Կարապետյան և Գ. Նժդեհի փողոցներում կառուցվել են հեղեղատարներ,
20. Ստեղծվել է «Գորիս համայնքի բարեկարգում և բնակարանային տնտեսություն» ՀՈԱԿ-ը, վերանորոգվել է ՀՈԱԿ-ի շենքը, մեքենայական կազմը:

<u>Գիշերային լուսավորության համակարգման բնագավառում՝</u>

1. Սյունիք և Քրիստափոր փողոցներն ամբողջությամբ վերազինվել են նոր էներգաարդյունավետ փողոցային լուսավորության սարքավորումներով՝ տեղադրվելով 112 լուսատու,
2. Քաղաքի տարբեր թաղամասերում հին լուսատուները փոխարինվել են էներգաարդյունավետ լուսատուներով՝ թվով 94 հատ,
3. Փոխարինված 21 լուսատու տեղադրվել է քաղաքի տարբեր թաղամասերում,
4. Տեղադրվել է 32 նոր էլեկտրասյուն,
5. Ամբողջովին վերափոխվել է Գորիս գյուղի ժայռերի տարածքում տեղադրված 8 լուսարձակից 4-ը, քաղաքի մուտքի և Բակունցի արձանի տարածքում տեղադրվել՝ 4 լուսարձակ,

<u>Աղբահանության կազմակերպման ոլորտում՝</u>

1. Յուրաքանչյուր տասնօրյակը մեկ մաքրվում է քաղաքի աղբարկղների շրջակայքը և հողածածկվում կենտրոնական աղբավայրի աղբը,
2. Ամիսը 2 անգամ կատարվել է շնասպանություն,
3. Տեղադրվել և փոխվել է 120 մեծ և 20 փոքր աղբարկղ,
4. Տեղադրվել է «Գորիս» անվանական 16 նստարան,
5. Իրականացվել են ծառերի սանիտարական էտման, ծառաբների սպիտակեցման, մոլախոտերի դեղային վնասազերծման, մայթերի խոտհունձի աշխատանքներ,
6. Իրականացվել են ծառատունկ և ծաղկապատում,
7. Իրականացվել են փողոցների ձյան մաքրման, ավազի ցանման, լվացման աշխատանքներ:

<u>Լրամշակվել է համայնքի քաղաքաշինական գլխավոր հատակագիծը</u>

1. «Սյունիք-Զանգեզուր» բարեգործական հիմնադրամով՝ Սուրիկ Խաչատրյանի հովանավորությամբ.
- վերանորոգվել է Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տանիքը,
- հիմնանորոգվել է քաղաքի Գ. Տաթևացու անվան հրապարակը,
- Հայրենական Մեծ պատերազմի հուշահամալիրում կառուցվել է Արցախյան ազատամարտում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձան:
2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և Գորիսի համայնքապետարանի աջակցությամբ վերանորոգվել է Սերո Խանզադյանի տուն-թանգարան տանող ճանապարհը, շենքն ամբողջությամբ, փոխվել են դռներն ու լուսամուտները:
3. Կատարվել են քաղաքի տարբեր փողոցների եզրառուների վերանորոգման աշխատանքներ:

<u>Կրթության, մշակույթի և սպորտի բնագավառում՝</u>

2016թ. ընթացքում Գորիս քաղաքում կազմակերպվել և իրականացվել են ազգային, պետական տոներին նվիրված միջոցառումներ, հոբելյաններ, փառատոներ, ցուցահանդեսներ, տոնախմբություններ, գիտաժողովներ, համերգային ու թատերական ծրագրեր, սպորտային մրցումներ, հուշամրցաշարեր և առաջնություններ: Նախադպրոցական ուսումնական հաստատությունների միջև կազմակերպվել է ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն նախադպրոցական հիմնարկ» մարզական միջոցառումը, որի

շրջանակներում Գորիսի թիվ 2 ՆՈՒՀ-ի «Արև» թիմը հանրապետությունում զբաղեցրել է 3-րդ տեղը: Կազմակերպվել է ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթը: Բացի այդ, ասֆալտապատվել է թիվ 1 ՆՈՒՀ-ի բակն ամբողջությամբ, թիվ 4 ՆՈՒՀ-ում վերանորոգվել է թվով 4 սանհանգույց, վերանորոգման աշխատանքներ են տարվել համայնքի թիվ 1, 2, 3 հանրակրթական դպրոցներում, ամբողջությամբ նորոգվել է թիվ 6 հիմնական դպրոցի ջրագիծը: Համայնքապետարանի ֆինանսավորմամբ կառուցվել է ըմբշամարտի մարզադահլիճի ջրամատակարարման ցանցը:

Տրանսպորտի բնագավառում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

1. Կազմակերպվել է համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքն ու համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների և կազմակերպությունների գործունեությունը,
2. 5 երթուղուց 2-ը կրճատվել է, 2-ը վերափոխվել ավտոբուսային երթուղու՝ ընդգրկելով ավելի շատ թաղամասեր,
3. Կազմակերպվել են երթուղային տաքսիների և ավտոբուսների աշխատանքները նաև շաբաթ օրերին,
4. Առաջիկայում կունենաք ևս մեկ ավտոբուսային երթուղի:

Սոցիալական ապահովության բնագավառում կատարված աշխատանքներ՝

1. Իրականացվել են համայնքի ազգաբնակչության սոցիալական ապահովության որոշակի աջակցություններ՝ խորհրդատվությունների և օգնությունների ձևով,
2. Աջակցություն է տրվել Գորիս համայնքի 2 սոցիալական տան կառավարման և պահպանման աշխատանքների համար,
3. Գորիսի սոցիալական տների բնակիչներին տրվել է էլեկտրաէներգիային գազի վարձավճարների փոխհատուցում,
4. Ապահովվել է քաղաքապետարանի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի գործունեությունը:

Գյուղատնտեսության բնագավառում կատարված աշխատանքները՝

1. 2016թ. մարտին ստեղծվել է «Գորիս համայնքի արոտօգտագործողների միավորում» Ս/Կ, որի նպատակն է տնտեսական և սոցիալական զարգացման ճանապարհով խթանել համայնքի ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացումը, «Համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման» պլանի իրականացման միջոցով.
2. Համաձայն ՀՀ գյուղատնտեսության նախարարության կառուցվածքում գործող «Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցություն» ծրագրի իրականացման գրասենյակի («ԳԲԱ» ԾԻԳ), «Գորիս համայնքի արոտօգտագործողների միավորում» Ս/Կ և Գորիսի համայնքապետարանի միջև կնքված եռակողմ պայմանագրի, Համաշխարհային բանկի միջոցներով (5% համաներդրմամբ) համայնքի մերձակա սակավաջուր արոտավայրերում կտեղադրվեն թվով երեք անասնախմոց, որոնց նախագծա-նախահաշվային փաստաթղթերն արդեն պատրաստ են: Նույն Պայմանագրի համաձայն Կոոպերատիվին կտրամադրվի երկու միավոր գյուղ. տեխնիկա (20% համաներդրմամբ):
3. Նախատեսված է նաև նորագույն տեխնոլոգիաներով հագեցած անասնասպանդանոցի կառուցում, որը տարածաշրջանում կլինի միակը իր ծավալով.
4. Համայնքի տարածքում կատարվել է ընտանի կենդանիների ամենամյա հաշվառում, կազմակերպվել է համայնքային սեփականություն համարվող հողերի, անտառային և ջրային տարածքների, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանություն:
5. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի հողօգտագործողներին 2016թ. գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով՝ պետական աջակցության ծրագրի շրջանակներում բաշխվել է դիզ. վառելիք, աշնանացան ցորենի, գարնանացան գարու, առվույտի, կորնգանի սերմացուներ, ազոտական պարարտանյութ:
6. Իրականացվել են անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումներ, ոռոգման ցանցի նորոգման աշխատանքներ:
7. «Հայկական տեխնոլոգիական խումբ» հիմնադրամի կողմից տրամադրվել է անասնաբուժական շարժական լաբորատորիա:

Համայնքի արտաքին՝ միջազգային, միջհամայնքային կապերի և ՀԿ-ների հետ համագործակցության զարգացմանն ուղղված գործունեությունը՝

1. Միացյալ ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի /ՄԱԿԵՏՀ/ և Ավստրիական Միջազգային տնտեսական համագործակցության կազմակերպության /OIER/ հետ համագործակցության շրջանակներում ՀՀ քաղաքաշինության նախարարության առաջարկությամբ Գորիս քաղաքում իրականացվում է «Խելացի քաղաքային լուծումներ՝ անցումային և զարգացող երկրների համար» պիլոտային ծրագիրը:
2. 2015թ հուլիսի 22-ից Գորիսը հանդիսանում է «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքներ» կազմակերպության դիտորդ անդամ:
3. Գորիսում մեկնարկել է Ասիական զարգացման բանկի, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, COWI A/S դանիական խորհրդատվական ընկերության համատեղ ուժերով և Ճապոնիայի կառավարության աղքատության նվազեցման հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող «Հայաստանի հեռավոր և փոքր համայնքներում կոշտ թափոնների կառավարման լուծումներ» ծրագիրը:
4. Կառավարությունը 2016թ. հունիսի 9-ի նիստում հավանության է արժանացրել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ 2016թ. փետրվարի 23-ին ստորագրված համաձայնագիրը, որով նախատեսվում է վերակառուցել և արդիականացնել Գորիսի մանկական և երիտասարդական զբոսայգիները, իրականացնել Գորիսի պատմական կենտրոնի հուշարձաններ համարվող ժողովրդական տների և հասարակական շինությունների գլխավոր ճակատների, հարակից տարածքների և ենթակառուցվածքների վերակառուցման, Գորիս գյուղ տանող հետիոտն ճանապարհի, տրանսպորտային կամուրջի կառուցման, Գորիս գյուղի բերդաքաղաքի քարանձավների մաքրման և արդիականացման աշխատանքները.
5. Գորիսում իրականացվում է «Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ» COMUS ծրագիրը: Ծրագրի հիմնական նպատակն է խթանել սոցիալական և տնտեսական զարգացումը՝ ուժեղացնելով մշակութային ժառանգության ռեսուրսները պատմական քաղաքներում,
6. «Ուրբան» հիմնադրամով 2016թ-ի հուլիսի 1-ից մեկնարկել է «Մաքուր դաշինք. Մատչելի ծառայություններ Գորիս և Սառնակունք բազմաբնակավայր համայնքներին» ծրագիրը,
7. Գորիս քաղաքը անդամակցել է Եվրոպական միության «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնությանը,
8. Վիեն-Գորիս քույր քաղաքների համագործակցության շրջանակներում «Երկիր և մշակույթ» կազմակերպությունը վերականգման աշխատանքներ են իրականացվել Սուրբ Հռիփսիմե եկեղեցու հարակից տարածքում գտնվող 2 քարանձավներում,
9. 2016թ. ամռանը Գորիս են ժամանել Ֆրանսիայի «Ագրոտեկ» քոլեջի ուսանողները, որոնք ակտիվ մասնակցություն են ցուցաբերել Հին Գորիս պատմամշակութային տարածքում հետիոտն ճանապարհի ստեղծմանը՝ որպես հումք օգտագործելով միայն բնական նյութեր,
10. Ֆրանսիայի Վիեն քաղաքի հետ շարունակում են համագործակցել Գորիսի քաղաքային պատկերասրահը, Ֆրանսախոսների, Մշակութային և տուրիզմի զարգացման կենտրոնները, թիվ 1 և 5 ՆՈՒՀ-երը,
11. 2016թ. Գորիսի պատվիրակությունը՝ համայնքապետ Վաչագան Ադունցի գլխավորությամբ, պաշտոնական այցով մեկնել է Բելառուս՝ մասնակցելու Բելառուսի հանրապետության տոնին և Գորիսի քույր քաղաք Նեսվիժի օրվա միջոցառումներին,
12. 2016թ. Գորիս են ժամանել «GREF» «Թոշակառու ուսուցիչներ առանց սահմանի» կազմակերպության կամավորները,
13. Համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերի շրջանակներում նախատեսվում են հետագա համագործակցությունների հաստատում տեղական և միջազգային կազմակերպությունների և Հայաստանում գործող արտասահմանյան դեսպանատների հետ: Այդ նպատակով կազմակերպվել են բազմաթիվ երկկողմ և բազմակողմ հանդիպումներ, խորհրդաժողովներ, որոնց ընթացքում քննարկվել են հետագա համագործակցությունների համար անհրաժեշտ քայլերը:

2013-2016թթ. Զարգացման ծրագրով նախատեսված, սակայն չիրականացված ծրագրերը ներառվել են 2017-2021թթ. Հնգամյա զարգացման ծրագրում, որի իրատեսականությունն ու հաշվետվողականությունը կապահովեն սահմանված խնդիրների և նպատակների իրականացումը: